բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտերի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1.	<<Էսգեթ Ֆարմա>> ՍՊԸ	1

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5.Հարցում կատարելու մասին
(Մ.Մարգարյան)

Թ17ՊՈԼ-17/3-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

6. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
(Մ.Մարգարյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

7.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Մ.Մարգարյան)

Թ17ՊՈԼ-17/3-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել բանակցությունների վարման օրը՝ <<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենքում՝ հասցե ք. Երևան, Տիգրան Մեծի 36ա. տնօրենի ընդունարան:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Մարգարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Քոթանյան,
Ա.Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան